# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
## N N ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ՎՏ/ԾՈ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** << 19 >> 10 **2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լեգիոն 9» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Խոսրոևայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 20.10.2016թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ՎՏ/ԾՈ գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ՎՏ/ԾՈ ծածկագրով գնման Պայմանագրի 2017 թվականին կնքված 1-ին համաձայնագիրը նվազեցնել ևս մեկ անգամ՝ 7 255 000 (յոթ միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-61-52**
**Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru**

_______________ **Ա. Համբարյան**
(ստորագրություն) /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«Լեգիոն 9» ՍՊԸ**
**Արարատի մ., ք. Վեդի, Ս. Վարդանյան 1-ին նրբ. Տուն 5/1**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570021975470100**
**ՀՎՀՀ 04226994**
**էլ. հասցեն՝ legion-9@list.ru**

_______________ **Տ. Խոսրոևա**
**(ստորագրություն)** **/տնօրեն/**
Կ.Տ